| | |
|---|---|
| **ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.121**<br>**« ՀԱՆ-ԲՄԾՁԲ-01/18»** | **Договор N 2.121**<br>**«AAH-BMTsDzB-01/18»** |
| ք. Երևան «31» 05 2018 թ. | г. Ереван «31» 05 2018г. |
| <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև` Պատվիրատու), մի կողմից, և «Ազիմուտ» ԲԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Ա.Սաիդովի, որը գործում կանոնադրության հիման (այսուհետև` Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին: | Закрытое акционерное общество «Армаэронавигация», далее именуемое «Заказчик», в лице генерального директора А.Гаспаряна, действующего на основании устава общества, с одной стороны, и акционерное общество «Азимут», далее именуемое «Исполнитель», в лице генерального директора, А.Саидова, действующего на основании устава, с другой стороны, заключили настоящий договор о нижеследующем: |
| **1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ** | **1. ПРЕДМЕТ ДОГОВОРА** |
| 1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում «Գալակտիկա» ՕԵՍ ավտոմատացված համակարգի հետերաշխիքային սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև` Ծառայություն)` համաձայն սույն պայմանագրի անքաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: | 1.1. Заказчик поручает, а Исполнитель берет на себя обязательство по предоставлению услуг по постгарантийному обслуживанию КСА УВД «Галактика», (в дальнейшем – Услуга), согласно требованиям Технической характеристики – графика закупок, предусмотренной Приложением N1, являющимся неотъемлемой частью настоящего договора. |
| 1.2. Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1.1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան: | 1.2. Услуги предоставляются в соответствии с Технической характеристикой предусмотренной Приложением N 1.1 |
| **2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | **2. ПРАВА И ОБЯЗАННОСТИ СТОРОН** |
| **2.1. Պատվիրատուն իրավունք ունի`** | **2.1. Заказчик имеет право:** |
| 2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը` առանց միջամտելու Կատարողի գործունեությանը: | 2.1.1. В любое время проверять ход и качество предоставляемой Исполнителем Услуги без вмешательства в деятельность Исполнителя. |
| 2.1.2. Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 և N1.1 հավելվածում նշված Տեխնիկական | 2.1.2. Если предоставлена Услуга, не соответствующая Технической характеристике – |



АО «Азимут» ЮС Согласовано

| | |
|---|---|
| բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն. | графику закупок, предусмотренной Приложением N1 и N 1.1: |
| ա/ Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը. | а) Не принять Услугу, установив по своему усмотрению сроки для безвозмездной замены Услуги несоответствующего качества на соответствующий настоящему договору Услугу и потребовать у Исполнителя выплатить штраф, предусмотренный пунктом 5.2 настоящего договора, а также пени, предусмотренные пунктом 5.3. |
| բ/ Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը. | б) Отказаться от исполнения настоящего договора и потребовать вернуть выплаченную за Услугу сумму, а также потребовать у Исполнителя оплатить штраф, предусмотренный пунктом 5.2 настоящего договора. |
| 2.1.3. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝<br>ա/ մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,<br>բ/ խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը: | 2.1.3. В одностороннем порядке расторгнуть настоящий договор, если Исполнитель существенно нарушил настоящий договор. Нарушение Исполнителем договора является существенным, если:<br>а) предоставленная Услуга не соответствует требованиям, предусмотренным Приложением N 1 настоящего договора,<br>б) нарушен срок предоставления Услуги |
| **2.2. Պատվիրատուն պարտավոր է՝**<br>2.2.1. Քննարկել և ընդունել N1 և N1.1 հավելվածներով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին: | **2.2. Заказчик обязан:**<br>2.2.1. Рассмотреть и принять результат Услуги, предоставленной в соответствии с приложениями N1 և N1.1 Технической характеристикой – графиком закупок, а в случае обнаружения недостатков в результате Услуги, незамедлительно уведомить об этом Исполнителя в письменной форме. |
| 2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը: | 2.2.2. В случае принятия результата Услуги выплатить Исполнителю подлежащие выплате последнему суммы, а в случае нарушения сроков – также пени, предусмотренные пунктом 5.5 настоящего договора. |



АО «Азимут» Согласовано

| | |
|---|---|
| **2.3. Կատարողն իրավունք ունի՝**<br>2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը: | **2.3. Исполнитель имеет право:**<br>2.3.1. Требовать от Заказчика выплатить подлежащую выплате сумму, а в случае нарушения со стороны Заказчика срока, предусмотренного пунктом 4.2 настоящего договора, – также пени, предусмотренные пунктом 5.5 настоящего договора. |
| **2.4. Կատարողը պարտավոր է՝**<br>2.4.1. Սույն պայմանագրի N1 և N1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ: | **2.4. Исполнитель обязан:**<br>2.4.1. Руководствуясь действующим законодательством, обеспечить оказание Услуги согласно условиям, предусмотренным приложениями N1 և N1.1 настоящего договора. |
| 2.4.2. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը: | 2.4.2. В предусмотренных настоящим договором случаях выплачивать штрафы и пени согласно пунктам 5.2 и 5.3 настоящего договора. |
| 2.4.3. Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին: | 2.4.3. В случае ликвидации или начала процесса банкротства в период обеспечения выполнения настоящего договора заранее уведомить об этом Заказчика в письменной форме. |
| **3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ** | **3. ПОРЯДОК СДАЧИ И ПРИЁМА УСЛУГ** |
| 3.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: | 3.1. Результат исполнения договора или его части принимаются посредством подписания между Заказчиком и Исполнителем протокола сдачи-приемки, а факт сдачи Заказчику результата договора фиксируется посредством обоюдно утвержденного документа – с указанием даты составления последнего. |
| 3.1.1. Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է երկու անգամ՝<br>ա/ Պայմանագրի ստորագրման օրվանից հաշված 6 (վեց) ամիսը լրանալուց հետո,<br>բ/ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ավարտից հետո: | 3.1.1. Протокол сдачи-приемки предоставленных услуг подписывается 2 раза:<br>а) по истечении 6 (Шести) месяцев с даты подписания Договора,<br>б) по окончанию предоставления услуг по Договору. |



АО "Азимут" ЮС Согласовано

| | |
|---|---|
| 3.1.2 Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում): | 3.1.2. До дня окончания, включая этот день выполнения предусмотренных настоящим договором Работ, Исполнитель представляет Заказчику документ, фиксирующий факт сдачи Заказчику результатов договора (Приложение 3.1), а посредством электронной системы закупок armeps (руководство к действию размещено в отделе “Электронные закупки” по адресу www.procurement.am) также протокол сдачи и приема (Приложение 3). При этом, Исполнитель не проставляет печать в протоколе сдачи и приема, утверждает его электронной подписью, заполняя лишь те колонки, которые касаются данных о нем (порядок заполнения размещен в подразделе “Приказы министра финансов” раздела “Законодательство” по адресу www.procurement.am). |
| 3.2. Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը: | 3.2. Если предоставленные Услуги соответствуют условиям договора, Заказчик в течение 10 рабочих дней со дня следующего дню получения списка документов, отмеченных в пункте 3.1, подписывает и посредством системы электронных закупок armeps предоставляет Исполнителю подписанный с его стороны протокол сдачи и приема, а также положительное заключение, послужившее основанием для его подписания. |
| 3.3. Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման | 3.3. Если предоставленные Услуги или какая-либо их часть не соответствует условиям договора, то Заказчик не подписывает протокол сдачи и приема и в отмеченный в пункте 3.2 договора срок, путем системы электронных закупок armeps Исполнителю возвращается протокол сдачи и приема, а также отрицательное заключение, послужившее основанием для его неподписания. В случае |



АО "Азимут" ЮС Согласовано

| | |
|---|---|
| համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ: | применения данного пункта, Заказчик предпринимает для данной ситуации средства, предусмотренные договором, и по отношению к Исполнителю предпринимает предусмотренные договором меры ответственности. |
| 3.4. Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: | 3.4. Если Заказчик в предусмотренные пунктом 3.2 настоящего договора сроки не принимает результат договора или не отказывается, то результат договора считается принятым, и Заказчик на следующий день после последнего срока, предусмотренного пунктом 3.2 настоящего договора, предоставляет Исполнителю утвержденный со стороны Заказчика протокол сдачи-приемки. |
| 3.5. Վերանորոգված կամ փոխարինված սարքավորումներն առաքվում են մինչև Պատվիրատուի պահեստ, իսկ ոչ ռեզիդենտ մատակարարի դեպքում՝ միջազգային առևտրի պալատի կողմից սահմանված «Incoterm 2010, CIP» պայմաններով, Հայաստանի Հանրապետություն, մինչև «Զվարթնոց» օդանավակայան մաքսային տերմինալ: | 3.5. Отремонтированные или замененные оборудования доставляются до склада Заказчика, а в случае поставщика нерезидента - установленными международной торговой палатой условиями «Incoterm 2010, CIP» Республика Армения, до таможенного терминала аэропорта "Звартноц". |
| 3.6. Վերանորոգված կամ փոխարինված սարքավորումների երաշխիքային ժամկետի հաշվարկը սկսվում է տվյալ սարքավորումը Պատվիրատուի կողմից ստանալուց հետո և կազմում է առնվազն 365 օրացուցային օր: | 3.6. Расчет гарантийного срока отремонтированного или замененного оборудования начинается после получения Заказчиком данного оборудования и составляет по крайней мере 365 календарных дней. |
| **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ** | **4. ЦЕНА ДОГОВОРА** |
| 4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում 118.000,00 (հարյուր տասնութ հազար) եվրո: Յուրաքանչյուր վեց ամսվա համար Ծառայության գինը կազմում է 59.000,00 (հիսունինը հազար) եվրո: | 4.1. Общая цена Услуги предоставляемой Исполнителем согласно настоящему договору составляет 118.000,00 (сто восемьнадцать тысяч) Евро. Цена Услуг за каждые шесть месяцев составляет 59.000,00 (пятьдесят девять тысяч) евро. |



АО «Азимут» ЮС Согласовано

| | |
|---|---|
| 4.1.1Պայմանագրի գինը ներառում է նաև այն հարկերը, որոնք համաձայն Պայմանագրի 4.7 կետի կվճարվեն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) պետական բյուջե:<br>Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը: | 4.1.1 Цена договора включает также все расходы, которые согласно пункту 4.7 Договора подлежат выплате в государственный бюджет Республики Армения (далее: РА).<br>Цена предоставления Услуги неизменная и Исполнитель не имеет права требовать увеличить, а Заказчик – уменьшить эту цену. |
| 4.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում:<br>Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է արձանագրությունը ստորագրելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: | 4.2. Заказчик оплачивает предоставленную Услугу безналичным переводом путем перечисления денежных средств на расчетный счет Исполнителя. Перечисление денежных средств осуществляется на основании протокола сдачи-приемки в месяц, установленный графиком платежей Приложения N 2 настоящего договора.<br>Если протокол составляется после 20-го числа данного месяца и в этом месяце по графику платежей предусмотрены финансовые средства, то оплата осуществляется в течение 15 рабочих дней после подписания протокола. |
| 4.3. Վերանորոգման կամ փոխարինման ենթակա սարքավորումների տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը Պատվիրատուից դեպի Կատարող և հետադարձ հասցեով հոգում է Կատարողը: Պատվիրատուից դեպի Կատարող տեղափոխման ծախսերը Պատվիրատուն կատարում է իր միջոցների հաշվին, հետագայում ներկայացնելով ծախսերի հետ կապված բոլոր փաստաթղթերը Կատարողին՝ փոխհատուցման համար:<br>Կատարողի կողմից փոխհատուցումն իրականացվում է Պատվիրատուից ստացված փաստաթղթերի հիման վրա 10 բանկային օրվա ընթացքում: | 4.3. Все расходы, связанные с транспортировкой подлежащего ремонту или замене оборудования от Заказчика Исполнителю и обратно, берет на себя Исполнитель. Выплаты по транспортировке от Заказчика к Исполнителю выполняет Заказчик собственными средствами, в дальнейшем предоставляя Исполнителю все связанные с расходами документы для компенсации.<br>Исполнитель осуществляет компенсацию на основании полученных от Заказчика документов. |
| 4.4. Պայմանագրի կատարման ժամկետ սահմանել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց | 4.4. Установить срока исполненеия договора 365 календарных дней, после вступления в силу |



АО "Азимут" ЮС Согласовано

| | |
|---|---|
| հետո 365 օրացուցային օր: | договора. |
| 4.5. Միջազգային համաձայնագրի դրույթներից ելնելով՝ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու նպատակով ոչ ռեզիդենտը ՀՀ հարկային գործակալին ներկայացնում է մյուս պետության ռեզիդենտ հանդիսանալու մասին տեղեկանք, որում պետք է նշված լինի, որ ոչ ռեզիդենտը նշված տարում տվյալ երկրի ռեզիդենտն է: | 4.5. Исходя из положений Международного соглашения, с целью исключения двойного налогообложения доходов, нерезидент представляет налоговому агенту РА справку о том, что он является резидентом другой страны, где также должно быть отмечено, что нерезидент является резидентом отмеченной страны в данном году. |
| 4.6. Պայմանագրի գնում ներառված տեղային աշխատանքների գումարի 80%-ը Պատվիրատուն կվճարի Կատարողին, իսկ մնացած 20%-ի մասով վճարումը Կատարողին կիրականացվի ռեզիդենտության վերաբերյալ տեղեկանքի առկայության դեպքում: Նշված տեղեկանքը (տես՝ կետ 4.5) պետք է ներկայացվի մինչև աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահը: | 4.6. Включенные в стоимость Договора 80% суммы местных работ Заказчик выплатит Исполнителю, а по части остальных 20% - оплата Исполнителю будет осуществлена при наличии справки о резиденстве. Данная справка (см. Пункт 4.5) должна быть представлена до момента подписания протокола сдачи и приема работ. |
| 4.7. Ոչ ռեզիդենտի ռեզիդենտության վերաբերյալ տեղեկանքը չներկայացնելու դեպքում Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե է փոխանցում Պայմանագրի 4.6 կետում նշված աշխատանքների դիմաց վճարված գումարներից հաշվարկված ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարը: | 4.7. В случае, если справка о резидентстве нерезидента не предоставляется, выплата налога на прибыль нерезидента в государственный бюджет РА расчитанного из оплаченной суммы за работы, указанные в пункте 4.6 Договора, перечисляется Заказчиком в установленном порядке и размерах предусмотренный законодательством РА. |
| 4.8. Սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառվող բոլոր այլ հարկերը և տուրքերը ամբողջությամբ վճարվում են Պատվիրատուի կողմից:<br>Սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված Ռուսաստանի Դաշնության տարածքում կիրառվող բոլոր այլ հարկերը և տուրքերը ամբողջությամբ վճարվում են Կատարողի կողմից: | 4.8. Все другие налоги и пошлины, применимые на территории Республики Армения в связи с выполнением настоящего Договора, полностью несет Заказчик.<br>Все другие налоги и пошлины, применимые на территории Российской Федерации в связи с выполнением настоящего Договора, полностью несет Исполнитель. |
| **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ** | **5. ОТВЕТСТВЕННОСТЬ СТОРОН** |
| 5.1. Կատարողը պատասխանատվություն է | 5.1. Исполнитель несёт ответственность за |



АО "Азимут" ЮС Согласовано

| | |
|---|---|
| կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար: | соблюдение требований предоставления Услуги, предусмотренных настоящим договором. |
| 5.2. Սույն պայմանագրի N 1.1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]: | 5.2. За каждый случай предоставления Исполнителем Услуги, не соответствующей Технической характеристике, предусмотренной Приложением N 1.1, с Исполнителя взимается штраф в размере 0,5 (ноль целых пять десятых) процентов от суммы, указанной в пункте 4.1 настоящего договора. |
| 5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով: | 5.3. В случае нарушения Исполнителем сроков предоставления Услуги, предусмотренных настоящим договором, за каждый просроченный день с Исполнителя взимается пеня в размере 0,05 (ноль целых пять сотых) процентов от цены подлежащей предоставлению, но не предоставленной Услуги. |
| 5.4. Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ: | 5.4. Предусмотренные пунктом 5.3 настоящего договора пени исчисляются и зачисляются из подлежащих оплате Исполнителю в результате предоставления Услуги сумм. |
| 5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով: | 5.5. За нарушение Заказчиком сроков, предусмотренных пунктом 4.2 настоящего договора, в отношении Заказчика за каждый просроченный день рассчитывается пеня в размере 0,05 (ноль целых пять сотых) процентов от подлежащей оплате, но неоплаченной суммы. |
| 5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ | 5.6. В случаях, не предусмотренных настоящим договором, за неисполнение или ненадлежащее исполнение обязательств, стороны привлекаются к ответственности в порядке, предусмотренном законодательством РА. |



АО "Азимут" ЮС Согласовано

| | |
|---|---|
| օրենսդրությամբ սահմանված կարգով: | |
| 5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց: | 5.7. Выплата пени и (или) штрафов не освобождает стороны от исполнения своих договорных обязательств в полном объеме. |
| 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) | 6. ВОЗДЕЙСТВИЕ НЕПРЕОДОЛИМОЙ СИЛЫ (ФОРС-МАЖОР) |
| Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին: | За полное или частичное невыполнение обязательств по настоящему договору или заключаемым на его основе Соглашениям стороны освобождаются от ответственности, если это было следствием воздействия непреодолимой силы, которая возникла после заключения настоящего договора и которую стороны не могли предвидеть или предупредить. К таким событиям относятся землетрясение, наводнение, пожар, война, объявление военного или чрезвычайного положения, политические волнения, забастовки, приостановка работы средств коммуникации, акты государственных органов и т.д, повлекшие за собой невозможность исполнения обязательств по настоящему договору. Если воздействие непреодолимой силы длится больше чем 3 (три) месяца, то каждая из сторон имеет право расторгнуть договор, заранее уведомив об этом другую сторону. |
| 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ | 7. ПРОЧИЕ УСЛОВИЯ |
| 7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է 01.07.2018թ. և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: | 7.1. Настоящий договор вступает в силу с 01.07.2018г. и действует до выполнения сторонами в полном объёме предусмотренных настоящим договором обязательств. |
| 7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի | 7.2. Исходя из Договора, платное обязательство не может быть прекращено по причине возникшего из другого договора зачета встречных обязательств, без письменного и печатью утвержденного согласия сторон. |



АО «Азимут» ЮС Согласовано

| | |
|---|---|
| գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: | Возникшее из Договора право требования не может быть передано другому лицу, без письменного согласия должника. |
| 7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: | 7.3. В том случае, когда по предусмотренному законом порядку по отношению к выполнению требований закона, в результате контроля или наблюдения или рассмотрения жалоб протоколируется, что в процессе закупок, организованном с целью заключения договора, до заключения самого договора, Исполнитель представил фальшивые документы (информацию и данные), или решение об объявлении последнего отобранным участником не соответствует законодательству Республики Армения, то после возникновения данных оснований Заказчик имеет право односторонне расторгнуть договор, в случае, если запротоколированные нарушения до заключения договора были известны, согласно законодательству РА о закупках, были бы основанием для незаключения договора. При этом, Заказчик не несет ответственности за возникшие в результате одностороннего расторжения договора для Исполнителя потери или за риск упущенной выгоды, а последний обязан по установленному законом РА порядку возместить Заказчику ущерб, возникший по его причине в том объеме, по части которого договор был расторгнут. |
| 7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում: | 7.4. Судебные споры, связанные с настоящим договором, подлежат рассмотрению в судах РА. |
| 7.5. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: | 7.5. Изменения и дополнения к настоящему договору могут выполняться только по взаимному согласию сторон посредством заключения соглашения, которое будет являться неотъемлемой частью настоящего договора.<br>В договоре запрещается, а если стоимость договора является факторной, то также в |



АО «Азимут» ЮС Согласовано

| | |
|---|---|
| Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:<br>Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: | приложении к этому договору, в подписанном в последующих годах соглашении, осуществлять такие изменения, которые приводят к искуственному изменению объема или стоимости единицы закупаемого товара или же стоимости договора.<br><br>Случаи изменения договора вследствие независящих от сторон договора факторов устанавливает правительство Республики Армения. |
| 7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է: | 7.6. Срок поставки услуг может быть продлен до истечения срока действия по договору, при наличии предложения со стороны Исполнителя, с условием, что у Заказчика не пропала необходимость использовании услуги. При этом, в установленном настоящим пунктом случае срок поставки товара может быть продлен единажды до 30 календарных дней, но не дольше установленного договором срока |
| 7.7. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:<br>Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքի ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և | 7.7. В случаях надлежащего исполнения настоящего договора выгода (экономия) сторон (Заказчика и/или Исполнителя) и (или) понесенный ущерб являются выгодой или ущербом данной стороны.<br>Обязательства сторон настоящего договора перед третьими лицами, включая другие контракты, заключенные Исполнителем в рамках исполнения настоящего договора и вытекающие из них обязательства, выходят за рамки регулирования договора и не могут влиять на приемку результата исполнения договора. Эти отношения, связанные с исполнением данных сделок и вытекающих из них обязательств, регулируются нормами, регулирующими отношения, связанные с данными контрактами, и за них ответственен Исполнитель. |



АО «Азимут» ЮС Согласовано

| | |
|---|---|
| դրանց համար պատասխանատու է Կատարողը: | |
| 7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: | 7.8. Договор не может быть изменен в результате частичного невыполнения обязательств сторон или полностью расторгнут по обоюдному согласию обеих сторон, за исключением случаев сокращения финансовых средств, необходимых для предоставления услуг по установленному законодательством Республики Армения порядку. При этом, обоюдное согласие сторон о полном расторжении или частичном невыполнении обязательств сторон договора, должно быть приобретено до сокращения необходимых для предоставления услуг финансовых средств, по установленному законодательством РА порядку |
| 7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: | 7.9. В случае невыполнения или на основании выполнения ненадлежащим образом взятых Исполнителем обязательств, уведомление о целостном или частично одностороннем расторжении договора, Заказчик размещает в отделе <<Уведомления об одностороннем расторжении договоров>> по адресу www.procurement.am , отмечая при этом дату размещения. Об одностороннем расторжении договора Исполнитель считается надлежаще уведомленным, со дня, следующего после размещения уведомления, по установленному настоящим пунктом порядку. |
| 7.10. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում: | 7.10. Споры между Сторонами, возникнувшие в ходе настоящего договора, решаются путем переговоров. В случае если Стороны не придут к согласию, споры решаются в судах РА. |
| 7.11. Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն | 7.11. Настоящий договор состоит из 14 страниц, заключается в двух экземплярах, |



АО «Азимут» ЮС Согласовано

| | |
|---|---|
| հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N1.1, N2, N3 և N3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: | имеющих одинаковую юридическую силу. Приложения N1, N1.1, N2, N3 и N3.1 к настоящему договору являются неотъемлемой его частью, каждой стороне выдается по одному экземпляру договора. |
| 7.12. Այն դեպքում, երբ Կատարողը հանդիսանում է ոչ ռեզիդենտ, Պայմանագիրը կազմվում է երկու օրինակից երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն կամ հայերեն և անգլերեն: Հայերեն և ռուսերեն կամ հայերեն և անգլերեն տարբերակների միջև տարաձայնություններ ծագելու դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Կատարողի: | 7.12. В случае если Исполнителя является нерезидентом, договор составляется в двух экземплярах, на двух языках – армянском и русском или армянском и английском. В случае возникновения разногласий между армянским и русским вариантах, разница интерпретируется в пользу Исполнителя. |
| 7.13. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: | 7.13. К настоящему договору применяется право Республики Армения. |
